

Պատանի մաթեմատիկոս, ապրիլի 30, 2016թ.

6-րդ դասարան /տևությունը 90 րոպե/

1-10. Ընտրովի պատասխաններով առաջադրանքներ (յուրաքանչյուրը 1-ական միավոր)

1. Եթե $a-1=b+2=c-3=d+4=e-5$, ապա a, b, c, d, e թվերից ո՞րն է ամենափոքրը

- 1) a 2) b 3) e 4) d

2. Արմենը մաթեմատիկայից ստացել է երեք գնահատական, որոնց միջին թվաբանականը 8 է: Եվս մեկ գնահատական ստանալուց հետո նրա գնահատականների միջինը դարձավ 7: Ի՞նչ գնահատական ստացավ Արմենը:

- 1) 4 2) 5 3) 6 4) 8

3. Ճանճն ունի 6 ոտք, իսկ սարդը 8 ոտք: 2 ճանճը և 3 սարդը ունեն նույնքան ոտք, որքան 10 թռչունը և

- 1) 2 կատուն 2) 3 կատուն 3) 4 կատուն 4) 6 կատուն


4. Գրքի գինը իջեցրին 20%-ով, իսկ հետո նոր գինը բարձրացրին 25%, որից հետո այն դարձավ 500 դրամ: Գտնել գրքի սկզբնական գինը:

- 1) 500 2) 600 3) 450 4) 540

5. Ամսագիրն արժե 400 դրամ, իսկ գիրքը նրանից 60%-ով թանկ է: Պարզել, թե քանի՞ տոկոսով է ամսագիրն էժան գրքից:


- 1) 40 2) 37,5 3) 50 4) 60

6. Աննան վերևի շարքի յուրաքանչյուր կետը միացրեց ներքևի շարքի յուրաքանչյուր կետին: Քանի՞ հատված գծեց Աննան:



- 1) 40 2) 24 3) 11 4) 30

7. Նկարում $ABCD$ -ն ուղղանկյուն է, իսկ $PHRQ$ -ն քառակուսի է: Ներկված մասի մակերեսը հինգ անգամ փոքր է $ABCD$ -ի մակերեսից: Որքան է PX -ի երկարությունը:



- 1) 1 2) 1,5 3) 2 4) 4


8. Ո՞րն է այն նվազագույն երկնիշ թիվը, որը հնարավոր չէ ներկայացնել երեք տարբեր միանիշ թվերի գումարի տեսքով:

- 1) 23 2) 11 3) 25 4) 29

Պատանի մաթեմատիկոս, ապրիլի 30, 2016թ.

6-րդ դասարան /տևողությունը 90 րոպե/

9. Ինչի՞ է հավասար նկարում բերված պատկերի պարագիծը



- 1) 30 2) 46 3) 40 4) 44

10. Դպրոցում բոլոր աշակերտները նստում են զույգերով, ընդ որում տղաների 60%-ի կողքին տղա է նստում, իսկ աղջիկների 20%-ի կողքին աղջիկ է նստում: Այդ դպրոցի աշակերտների ո՞ր տոկոսն են աղջիկները:

- 1) $33\frac{1}{3}$ 2) 60 3) 50 4) 30

11-15. Ընտրովի պատասխաններով առաջադրանքներ (յուրաքանչյուրը 2-ական միավոր)

11. Քանի զրոներով է վերջանում 1-ից մինչև 27-ը բոլոր բնական թվերի արտադրյալը:
12. Վաճառականը 56000 դրամով գնեց 134 մետր կտոր (սև և սպիտակ): Պարզել, թե քանի՞ մետր սպիտակ կտոր գնեց վաճառականը, եթե սև կտորի մետրն արժե 500 դրամ, իսկ սպիտակ կտորի մետրը՝ 300 դրամ:
13. 18 հատ քարտերից յուրաքանչյուրի վրա գրված է 4 կամ 5 թիվը: Հայտնի է, որ բոլոր քարտերի վրա գրված թվերի գումարը բաժանվում է 17-ի: Քարտերից քանիսի՞ վրա է գրված 4 թիվը:
14. Հայրը որդուց մեծ է 4 անգամ: 20 տարի հետո նա որդուց մեծ կլինի 2 անգամ: Քանի՞ տարեկան է հիմա հայրը:
15. Շուկայում ապրանքները փոխանակում են՝ ըստ աղյուսակի: Առնվազն քանի՞ հավ պետք է Պետրոսը բերի շուկա, որպեսզի կարողանա տուն տանել մեկ սագ, մեկ հնդկահավ և մեկ աքլոր:

Փոխանակման աղյուսակ

1 հնդկահավ \Leftrightarrow 5 աքլոր, 1 սագ+2 հավ \Leftrightarrow 3 աքլոր, 4հավ \Leftrightarrow 1 սագ